ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, Էլ. փոստ: alaverdimunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 մարտի 2023 թվականի N 301-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՔԱՂԱՔԻ ՍԱՆԱՀԻՆ ՍԱՐԱՀԱՐԹ 1/23 ՀԱՍՑԵՈՒՄ ԱՁ ԱՐՄԻՆԵ ԵԳԱՆՅԱՆԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ՀԱՄԱՐ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետի,«Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ,12-րդ և 15-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի « ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ, ԻՍԿ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ՕԲՅԵԿՏՆԵՐՈՒՄ՝ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» Ալավերդի համայնքի ավագանու 2022 թվականի նոյեմբերի 22-ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 27-Ն որոշման,

հիմք ընդունելով Ալավերդի քաղաքի ԱՁ Արմինե Եգանյանի 15.02.2023թ. դիմումը.

որոշում եմ.

1.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի Ալավերդի քաղաքի Սանահին Սարահարթ 1/23 հասցեում գտնվող ԱՁ Արմինե Եգանյանին տրամադրել ոգելից և արկոհոլային խմիչքի վաճառքի համար թիվ 170 թույլտվությունը:

2.ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքի ավագանու որոշմամբ սահմանված կարգով ԱՁ Արմինե Եգանյանից գանձել տեղական տուրք 10000 (տասը հազար) ՀՀ դրամ:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ԹԱՄԱԶՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, Էլ. փոստ: alaverdimunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 մարտի 2023 թվականի N 302-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՔԱՂԱՔԻ ՍԱՆԱՀԻՆ ՍԱՐԱՀԱՐԹ 2/30-1 ՀԱՍՑԵՈՒՄ ԱՁ ԳԵՎՈՐԳ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետի,«Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի , Ալավերդի համայնքի ավագանու 2022 թվականի նոյեմբերի 22-ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 27-Ն որոշման

հիմք ընդունելով Ալավերդի քաղաքի ԱՁ Գևորգ Գալստյանի 07.02.2023թ. դիմումը՝

որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի Ալավերդի քաղաքի Սանահին Սարահարթ 2/30-1 հասցեում գտնվող ԱՁ Գևորգ Գալստյանին տրամադրել հանրային սննդի կազմակերպման և իրացման համար թիվ 11 թույլտվությունը:

2. ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքի ավագանու որոշմամբ սահմանված կարգով ԱՁ Գևորգ Գալստյանից գանձել տեղական տուրք 5000 (հինգ հազար) ՀՀ դրամ:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ԹԱՄԱԶՅԱՆ**

2023թ. մարտի 10
ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, էլ. փոստ: alaverdimunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 մարտի 2023 թվականի N 303-Ա

2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 17-ԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԵՐՐՈՐԴ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏ ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ, 15-րդ և 16-րդ հոդվածներով, 35-րդ հոդվածի առաջին մասի առաջին կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ավագանու (այսուհետ՝ ավագանի) 2022 թվականի հոկտեմբերի 31-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ավագանու կանոնակարգն ընդունելու մասին» N 6-Ն որոշման՝

որոշում եմ.

1.2023 թվականի մարտի 17-ին ժամը 15:00-ին Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդու համայնքապետարանի վարչական շենքում՝ նիստերի դահլիճում, գումարել ավագանու հերթական դռնբաց նիստ:

2.2023 թվականի մարտի 17-ին կայանալիք ավագանու հերթական նիստի օրակարգում ընդգրկել հետևյա հարցերի որոշման նախագծերը՝ համաձայն հավելվածի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԹԱՄԱԶՅԱՆ

2023թ. մարտի 10
ք. Ալավերդի

Հավելված ՀՀ Լոռու մարզի

Ալավերդի համայնքի ղեկավարի

2023 թվականի մարտի 10-ի N 303-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 17-ԻՆ ԿԱՅԱՆԱԼԻՔ ԵՐՐՈՐԴ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐ

1. ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 17-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՔԱՂԱՔԻ ՄԱՍ ԿԱԶՄՈՂ ՍԱՆԱՀԻՆ ԹԱՂԱՄԱՍԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ ՏԱԼՈՒ ՄԱՍՈՎ ՀԱՆՐԱՅԻՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆԸ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ:

3. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ԿԱՆԱՆՑ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 -2027 ԹԹ. ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

5. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՃԱՃԿՈՒՏ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0.21455 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

6. ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՂՊԱՏ ԳՅՈՒՂԻ 21-ՐԴ ՓՈՂՈՑԻ ԹՎԱՅԻՆ ԱՆՎԱՆԱԿՈՉՄԱՆ ՄԱՍԻՆ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ԹԱՄԱՉՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, էլ. փոստ: alaverdimunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 մարտի 2023 թվականի N 304-Ա

23.02.2023Թ. N 249-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և հիմք ընդունելով քաղաքաշինության և հողաշինության բաժնի առաջարկությունը՝

որոշում եմ.

1.Ալավերդի համայնքի ղեկավարի 23.02.2023թ. «06-002-0108-0033 ծածկագրում գտնվող, Անդրանիկ Սերյոժայի Մոսինյանին ժառանգության իրավունքով պատկանող, 0.05 հա մակերեսով տնամերձ հողամասի հողհատկացման հիմքերը վերականգնելու, հողամասում կառուցված շինությունները, կատարված ձևափոխությունները և ավել օգտագործվող 0.03 հա մակերեսով սահմանազատված հողամասն օրենքի ուժով սեփական համարելու, 0.03383 ավել օգտագործվող սահմանազատված հողամասն ուղղակի վաճառքով օտարելու, փոստային հասցե տրամադրելու մասին» N 249-Ա որոշման երրորդ կետը խմբագրել հետևյալ խմբագրությամ. «Սեփական ճանաչված 0.08 հա մակերեսով հողամասից, ավել օգտագործվող 0.03383 հա մակերեսով հողամասը՝ 267934 (երկու հարյուր վաթսունյոթ հազար ինն հարյուր երեսունչորս) դրամ կադաստրային արժեքով, ուղղակի վաճառքով, օտարել Անդրանիկ Սերյոժայի Մոսինյանին:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ԹԱՄԱԶՅԱՆ**

2023թ. մարտի 13
ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, էլ. փոստ: alaverdimunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 մարտի 2023 թվականի N 305-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉՎԱԾ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ, 43-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ. N 912-Ն որոշման 34-րդ, 35-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության 19.11.2019թ. 225-Ն օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 04.06.2020թ. N 1023-Ն որոշումով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի 21.02.2023թ N 238-Ա որոշումը, սեփականության իրավունքի N 10032023-06-0038 վկայականը, վճարման անդորրագրերը և հաշվի առնելով, որ Ալեքսանդր Ծատինյանն ընդունել է ավտոտնակը և սպասարկման համար զբաղեցրած հողամասն ուղղակի վաճառքով ձեռք բերելու գնման նախապատվության առաջարկությունը, վճարել է օրինականացման համար սահմանված վճարները՝

որոշում եմ.

1.Համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Սանահին Սարահարթ թաղամաս,120 ավտոտնակ հասցեում գտնվող, համայնքի ղեկավարի 21.02.2023թ N 238-Ա որոշումով համայնքային սեփականություն ճանաչված և օրինականացված, 44.1 քմ արտաքին մակերեսով (40.4 քմ ներքին մակերեսով) ավտոտնակը՝ 45335 (քառասունհինգ հազար երեք հարյուր երեսունհինգ) դրամ արժեքով և սպասարկման համար զբաղեցրած 0.00441 հա մակերեսով հողամասը՝ 34927 (երեսունչորս հազար ինն հարյուր քսանյոթ) դրամ կադաստրային արժեքով, ուղղակի վաճառքով, օտարել Ալեքսանդր Ծատինյանին:

2.Որոշումն ուժի մեջ է մտնում ավտոտնակի և զբաղեցրած հողամասի առք ու վաճառքի պայմանագիր կնքելու պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԹԱՄԱԶՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, էլ. փոստ: alaverdimunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 մարտի 2023 թվականի N 306-Ա

06-022-0030-0005 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումով, ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021 թվականի մայիսի 10-ի «Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին» N 104-Լ հրամանով, հիմք ընդունելով Վարդգես Ղազարի Օհանյանի կողմից լիազորված անձ՝ Լեոնիկ Ռաֆայելի Խանդամիրյանի դիմումը, անձնագրի պատճենը, լիազորագիրը, սեփականության իրավունքի N 23122022-06-0026 վկայականը, ժառանգության իրավունքի վկայագիրը, Աքորի գյուղի վարչական աշխատակազմի կողմից 07.03.2023թ. տրված N 1041 տեղեկանքը, քաղաքաշինության և հողաշինության բաժնի առաջարկությունը՝

որոշում եմ.

1. Վարդգես Ղազարի Օհանյանին ժառանգության իրավունքով պատկանող՝ Լոռու մարզի Աքորի գյուղի 06-022-0030-0005 կադաստրային ծածկագրում գտնվող բնակելի տանը տրամադրել համայնք Ալավերդի, գյուղ Աքորի, 4-րդ փողոց, 1-ին փակուղի, 14 բնակելի տուն փոստային հասցեն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ԹԱՄԱՋՅԱՆ**

2023թ. մարտի 13
ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, էլ. փոստ: alaverdimunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 մարտի 2023 թվականի N 307-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԲԱՑ ՊԱՏՇԳԱՄԲՈՎ ԱՎՏՈՏՆԱԿԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հ անրապետությանo րենքի 42-րդ, 43-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ, 5-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ. N731Ն, 05.01.2022թ. N 13-Ն, 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումներով, ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021 թվականի մայիսի 10-ի «Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին» N 104-Լ հրամանով, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ. N 912-Ն որոշման 33-րդ, 34-րդ կետերով, հաշվի առնելով, որ ինքնակամ կառուցված բնակելի նշանակության բաց պատշգամբով ավտոտնակը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ, պահպանում է քաղաքաշինական նորմերը, հիմք ընդունելով «ՏՍ-ՌԻԵԼԹԻ» ՍՊ ընկերության կողմից տրված կադաստրի կոմիտեում ինքնակամ կառույցի հաշվառման տեղեկանքն ու հողամասի և շինության հատակագծերը, Քարկոփ բնակավայրի վարչական ղեկավարի 03.02.2023թ. կողմից տրված N 309 տեղեկանքը, քաղաքաշինության և հողաշինության բաժնի առաջարկությունը՝

որոշում եմ.

1.Ալավերդի համայնքի Քարկոփ բնակավայրում գտնվող, ինքնակամ կառուցված, 35.69 քմ արտաքին մակերեսով (31.4 քմ ներքին մակերեսով) բնակելի նշանակության բաց պատշգամբով ավտոտնակի նկատմամբ ճանաչել Ալավերդի համայնքի սեփականության իրավունքը:

2.Օրինականացնել Ալավերդի համայնքի Քարկոփ բնակավայրում գտնվող, 1997թ. ինքնակամ կառուցված, կադաստրի կոմիտեում 2023AQPQQ8 ծածկագրով հաշվառված, 35.69 քմ արտաքին մակերեսով բնակելի նշանակության բաց

պատշգամբով ավտոտնակը՝ սպասարկման համար զբաղեցրած 0.00357 հա մակերեսով հողամասով:

3.Ալավերդի Քարկոփ բնակավայրում գտնվող բնակելի նշանակության բաց պատշգամբով ավտոտնակին տրամադրել համայնք Ալավերդի, Քարկոփ, 1-ին փողոց, 10 ավտոտնակ փոստային հասցեն:

4.Ավտոտնակի զբաղեցրած հողամասն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:

5.Սահմանված ժամկետում դիմել անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեին ավտոտնակի նկատմամբ Ալավերդի համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:

6.Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմին ինքնակամ կառույցն իրականացրած անձին՝ Կարեն Փաշիկի Հովասափյանին օրինականացված բաց պատշգամբով ավտոտնակը և սպասարկման համար զբաղեցրած հողամասն ուղղակի վաճառքով ձեռք բերելու մասին ներկայացնել գնման նախապատվության գրավոր առաջարկություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ԹԱՄԱՋՅԱՆ**

2023թ. մարտի 13
ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, Էլ. փոստ: alaverdimunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 մարտի 2023 թվականի N 308-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԲԱՑ ՊԱՏՇԳԱՄԲՈՎ ԱՎՏՈՏՆԱԿԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հ անրապետությանo րենքի 42-րդ, 43-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ, 5-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ. N731-Ն, 05.01.2022թ. N 13-Ն, 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումներով, ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021 թվականի մայիսի 10-ի «Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին» N 104-Լ հրամանով, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ. N 912-Ն որոշման 33-րդ, 34-րդ կետերով, հաշվի առնելով, որ ինքնակամ կառուցված բնակելի նշանակության բաց պատշգամբով ավտոտնակը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ, պահպանում է քաղաքաշինական նորմերը, հիմք ընդունելով «ՏՍ-ՌԻԵԼԹԻ» ՍՊ ընկերության կողմից տրված կադաստրի կոմիտեում ինքնակամ կառույցի հաշվառման տեղեկանքն ու հողամասի և շինության հատակագծերը, Քարկոփ բնակավայրի վարչական ղեկավարի 08.02.2023թ. կողմից տրված N 365 տեղեկանքը, քաղաքաշինության և հողաշինության բաժնի առաջարկությունը՝

որոշում եմ.

1.Ալավերդի համայնքի Քարկոփ բնակավայրում գտնվող, ինքնակամ կառուցված, 87.93 քմ արտաքին մակերեսով (83.2 քմ ներքին մակերեսով) բնակելի նշանակության բաց պատշգամբով ավտոտնակի նկատմամբ ճանաչել Ալավերդի համայնքի սեփականության իրավունքը:

2.Օրինականացնել Ալավերդի համայնքի Քարկոփ բնակավայրում գտնվող, 1995թ. ինքնակամ կառուցված, կադաստրի կոմիտեում 20233WCETM ծածկագրով հաշվառված, 87.93 քմ արտաքին մակերեսով բնակելի նշանակության բաց

պատշգամբով ավտոտնակը՝ սպասարկման համար զբաղեցրած 0.00357 հա մակերեսով հողամասով:

3.Ալավերդի Քարկոփ բնակավայրում գտնվող բնակելի նշանակության բաց պատշգամբով ավտոտնակին տրամադրել համայնք Ալավերդի, Քարկոփ, 1-ին փողոց, 10 ավտոտնակ փոստային հասցեն:

4.Ավտոտնակի զբաղեցրած հողամասն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:

5.Սահմանված ժամկետում դիմել անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեին ավտոտնակի նկատմամբ Ալավերդի համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:

6.Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմին ինքնակամ կառույցն իրականացրած անձին՝ Կարեն Փաշիկի Հովասափյանին օրինականացված բաց պատշգամբով ավտոտնակը և սպասարկման համար զբաղեցրած հողամասն ուղղակի վաճառքով ձեռք բերելու մասին ներկայացնել գնման նախապատվության գրավոր առաջարկություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ԹԱՄԱԶՅԱՆ**

2023թ. մարտի 13
ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, էլ. փոստ: alaverdimunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 մարտի 2023 թվականի N 309-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՎՏՈՏՆԱԿԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀայաստանիՀ անրապետությանo րենքի 42-րդ, 43-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ, 5-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ. N731-Ն, 05.01.2022թ. N 13-Ն, 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումներով, ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021 թվականի մայիսի 10-ի «Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին» N 104-Լ հրամանով, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ. N 912-Ն որոշման 33-րդ, 34-րդ կետերով, հաշվի առնելով, որ ինքնակամ կառուցված բնակելի նշանակության ավտոտնակը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ, պահպանում է քաղաքաշինական նորմերը, հիմք ընդունելով «ՏՍ-ՌԻԵԼԹԻ» ՍՊ ընկերության կողմից տրված կադաստրի կոմիտեում ինքնակամ կառույցի հաշվառման տեղեկանքն ու հողամասի և շինության հատակագծերը, Քարկոփ բնակավայրի վարչական ղեկավարի 08.02.2023թ. կողմից տրված N 368 տեղեկանքը, քաղաքաշինության և հողաշինության բաժնի առաջարկությունը՝

որոշում եմ.

1.Ալավերդի համայնքի Քարկոփ բնակավայրում գտնվող, ինքնակամ կառուցված, 21.3 քմ արտաքին մակերեսով (20.5 քմ ներքին մակերեսով) բնակելի նշանակության ավտոտնակի նկատմամբ ճանաչել Ալավերդի համայնքի սեփականության իրավունքը:

2.Օրինականացնել Ալավերդի համայնքի Քարկոփ բնակավայրում գտնվող,1995թ. ինքնակամ կառուցված, կադաստրի կոմիտեում 2023SDLHN3 ծածկագրով հաշվառված, 21.3 քմ արտաքին մակերեսով բնակելի նշանակության ավտոտնակը՝ սպասարկման համար զբաղեցրած 0.00213 հա մակերեսով հողամասով:

3.Ալավերդի Քարկոփ բնակավայրում գտնվող բնակելի նշանակության ավտոտնակին տրամադրել համայնք Ալավերդի, Քարկոփ, 1-ին փողոց, 12 ավտոտնակ փոստային հասցե:

4.Ավտոտնակի զբաղեցրած հողամասն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:

5.Սահմանված ժամկետում դիմել անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեին ավտոտնակի նկատմամբ Ալավերդի համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:

6.Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմին ինքնակամ կառույցն իրականացրած անձին՝ Սամվել Սեյրանի Պապինյանին օրինականացված ավտոտնակը և սպասարկման համար զբաղեցրած հողամասն ուղղակի վաճառքով ձեռք բերելու մասին ներկայացնել գնման նախապատվության գրավոր առաջարկություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ԹԱՄԱԶՅԱՆ**

2023թ. մարտի 13
ք. Ալավերդի